Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Իրավաբանների հայկական ասոցիացիայի առաջարկները

ԲԿԳ 4-րդ գործողությունների ծրագրում ներառելու նպատակով

1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ		
Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները		2019թ. հունվարի 1 – 2020թ. հունիսի 30
Լիազոր մարմին		Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
Այլ շահագրգիռ մարմիններ	Պետական	Համայնքներ
	Ոչ պետական	Տեղական ինքնակառավարման և համայնքային զարգացման մեջ ներգրավված ՀԿ-ներ, ներառյալ՝ Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիր
Կարգավորման ենթակա խնդիրը		Առկա են բազմաթիվ եղանակներ, որոնցում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են մասնակցել պետական մակարդակով հանրային քաղաքականության մշակմանը և քննարկումներին: Օրինակ, առկա են այնպիսի կառուցակարգեր, ինչպիսիք են նախարարություններին կից հասարակական խորհուրդները, ad hoc ձևաչափով ստեղծված աշխատանքային խմբերը և այլն: Տեղական ինքնակառավարման մակարդակով, թեև գործնականում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց հասանելիության մակարդակը բավականին բարձր է, մասնավորապես՝ փոքր համայնքներում, սակայն վերոնշյալ սուբյեկտների միջև հարաբերությունները կարգավորված չեն. տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները պարտավոր չեն լսել ՔՀԿ-ների կարծիքները, և նրանք չունեն ՔՀԿ-ների հետ երկխոսելու պարտավորություն: Որոշակի ՔՀԿ-ները կարող են զարգացնել հարաբերությունները տեղական ինքնակառավարման մարմինների հետ, սակայն մենք այնպիսի կառուցակարգերի

	կարիք ունենք, որոնք կաջակցեն ՔՀԿ-ների խմբերի և տեղական ինքնակառավարման մարմինների միջև երկխոսությանը ցանկացած հարցի վերաբերյալ:
Հիմնական նպատակը	Մշակել կարգավորումներ, որոնք կպարտադրեն տեղական ինքնակառավարման մարմիններին ՔՀԿ-ների հետ երկխոսել: Կարգավորումները, կարող են մշակվել այնպես, որ երբ ՔՀԿ-ները տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջեն որոշակի ոլորտի կամ հարցի շուրջ երկխոսություն իրականացնել, ստեղծվի խորհուրդ, որը պարբերաբար նիստեր կիրականացնի հանրային քաղաքականության հարցերը քննարկելու նպատակով: • 10,000-ից պակաս բնակչություն ունեցող համայնքներում համայնքի ղեկավարը պարտավոր է ստեղծել քաղաքականության քննարկման խորհուրդ, եթե առնվազն 2 ՔՀԿ-ներ գրավոր դիմում են ներկայացրել, • 10,000-ից մինչև 100,000 բնակչություն ունեցող համայնքներում համայնքի ղեկավարը պարտավոր է ստեղծել քաղաքականության քննարկման խորհուրդ, եթե առնվազն 5 ՔՀԿ-ներ գրավոր դիմում են ներկայացրել, • ավելի քան 100,000 բնակչություն ունեցող համայնքներում համայնքի ղեկավարը պարտավոր է ստեղծել քաղաքականության քննարկման խորհուրդ, եթե առնվազն 10 ՔՀԿ-ներ գրավոր դիմում են ներկայացրել: • Մարզպետարանին ներկայացված գրավոր հարցումների դեպքում մարզպետը պարտավոր է ստեղծել քաղաքականության քննարկման խորհուրդ, եթե առնվազն 10 ՔՀԿ-ներ գրավոր դիմում են գրել: Կարգավորումները կարող են նաև ուղեցույցներ տրամադրել այն ոլորտների վերաբերյալ, որոնք կարող են քննարկման առարկա լինել, ինչպես նաև խորհուրդների նիստերի հաճախականության և ընթացակարգերի վերաբերյալ:
Պարտավորության հակիրճ նկարագրությունը	Կազմել և ընդունել կարգավորումներ, որոնք կպարտադրեն տեղական ինքնակառավարման մարմիններին երկխոսել ՔՀԿ-ների հետ
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը	Հանրային վստահության բարելավում, հանրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարում
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Հանրային մասնակցություն
Հավակնություն	Ակնկալվում է ձևավորել ՔՀԿ-ՏԻՄ երկխոսության համար կայուն կառուցակարգ

Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ ***Ընթացիկ գործողություններ***	Մեկնարկի օր	Ավարտի օր
«Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքների նախագծերի կազմում	2019 հունվարի 1	2019 հունիսի 30
Օրինագծերի ընդունում	2019 հուլիսի 1	2019 դեկտեմբերի 31
Տեղական ինքնակառավարման մարմիններին և ՔՀԿ-ներին ուղղված տեղեկատվական քարոզարշավ	2020 հունվարի 1	2020 հունիսի 30

2. ԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԵԳԻՍՏՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ		
Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները		2019թ. հունվարի 1 –2020թ. դեկտեմբերի 30
Լիազոր մարմինը		ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով,
Այլ շահագրգիռ մարմիններ	Այլ շահագրգիռ պետական մարմիններ	ՀՀ արդարադատության նախարարություն
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա
Կարգավորման ենթակա խնդիրը		Իրական սեփականատերերի նույնականացումը անկյունաքարային գործոն է հանդիսանում կառավարման առավել թափանցիկ համակարգի ձևավորման գործընթացում: Այն կարող է կարևոր դեր խաղալ պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և շահերի մշտադիտարկման, ազատ տնտեսական մրցակցության

	ապահովման, հակամենաշնորհային պայքարում օժանդակության, պետական գնումների ոլորտում թափանցիկության բարձրացման, ինչպես նաև՝ պետությանն ապօրինի հարստացման դեպքերի բացահայտման և ապօրինի ակտիվների վերականգնման հնարավորության ընձեռնման հարցում։ Ներկայումս, Հայաստանը ձեռնամուխ է եղել մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ստեղծել իրական սեփականատերերի գրանցամատյան։ Ավելին, այն ստանձնել է պարտավորություն՝ առաջիկա տարիներին քննարկել իրական սեփականատերերի բացահայտման շրջանակի մետաղական հանքարդյունաբերության ոլորտից դուրս ընդլայնման նպատակահարմարությունը[1], ինչից պարզ է դառնում, որ առկա չէ որևէ երաշխիք առ այն, որ շրջանակը կլայնանա։ Հետևաբար, հաշվի առնելով նախորդ պարբերությունում բերված հարցերը, ակնհայտ է դառնում, որ առկա է իրական սեփականատերերի համապարփակ գրանցամատյանի ստեղծման առավել որոշակի պարտավորությունների անհրաժեշտություն։ Անհրաժեշտ է ընդգծել, որ Հայաստանի «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության» (ԱՃԹՆ) անդամությունից բխող պահանջն է *«այն իրավաբանական անձանց իրական սեփականատերերի վերաբերյալ հանրամատչելի ռեգիստր պահպանել, որոնք դիմում են՝ մետաղական հանքավայրերն ուսումնասիրելու և շահագործելու իրավունքի համար, գործում են կամ ներդրումներ են իրականացնում արդյունահանման ոլորտի ակտիվներում»։*[2] Այսինքն, ռեգիստրը չի սահմանափակվում

[1] Իրական սեփականատերերի ճանապարհային քարտեզի գործողություն 1.11 կետ ։
[2] ԱՃԹՆ Ստանդարտի 2.5(ա) կետ։

	միայն մետաղական հանքերի մի քանի սեփականատերերով, այլև՝ տարածվում է հետևյալի վրա. • Ընկերություններ, որոնք դիմում են ՝ մետաղական հանքավայրերն ուսումնասիրելու և շահագործելու իրավունքի համար, • Կապալառուներ, որոնք հանքավայրերում որոշակի գործունեություն են իրականացնում հանքավայրի սեփականատիրոջ հետ պայմանագրերի հիման վրա, • Բանկերը, որոնք ֆինանսավորում են մետաղական հանքարդյունաբերությունը: Հետևաբար, պոտենցիալ ընկերությունների շրջանակը բավականին լայն է, և միշտ չէ, որ հեշտ է պարզել, արդյոք տվյալ ընկերությունը պետք է ներառվի գրանցամատյանում, թե՝ ոչ: Ուստի, ավելի հեշտ և արդյունավետ կլինի ընդլայնել շրջանակը՝ ներառելով Հայաստանում գործող բոլոր ընկերություններին: Բացի այդ, 2017 թվականի ապրիլի 25-ին ուժի մեջ մտած «Գնումների մասին» ՀՀ օրենքով ՀՀ-ում մասնակիորեն ներդրվել է իրական սեփականատերերի ինստիտուտը՝ նախատեսելով, որ մասնակիցը հայտով կներկայացնի իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալները, և եթե մասնակիցը ճանաչվի հաղթող, ապա տեղեկատվությունը կհրապարակվի ինտերնետ միջավայրում գործող գնումների պաշտոնական կայքում: Սակայն, ինչպես վերը նշվեց, միայն որոշակի ոլորտում սույն ինստիտուտի ներդրումը բավարար չէ

	Այս առնչությամբ հարկ է նշել, որ ԵՄ Փողերի լվացման դեմ 4-րդ դիրեկտիվով[3] դրված է իրական սեփականատերերի գրանցման կենտրոնական գրանցամատյանի ստեղծման պահանջ: Ավելին, ԲԿԳ անդամ 16 երկիր թվով 21 հանձնառություններ են ստանձնել իրական սեփականատերերի ինստիտուտի վերաբերյալ:[4] Վերջիվերջո, իրական սեփականատերերի համապարփակ ռեգիստր ստեղծելով, Հայաստանը հնարավորություն ունի դառնալ առաջադեմ պետություն այս ոլորտում՝ օրինակ ծառայելով մյուս երկրների համար:
Հիմնական նպատակը	Մշակել կարգավորումներ, որոնց հիման վրա կստեղծվի իրական սեփականատերերի ռեգիստր: Նախատեսել վերջինիս հրապարակայնության պահանջ: Կարգավորումները պետք է նաև պարունակեն հետևյալ հարցերի պատասխանները. • Ի՞նչ սանկցիաներ կիրառել իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը չտրամադրելու կամ կեղծ տեղակատվություն տրամադրելու դեպքում, • Ինչպե՞ս իրականացնել պետական հսկողությունը տեղեկատվության արժանահավատության նկատմամբ: • Ի՞նչ լծակներ տրամադրել ընկերություններին, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան ստանալ տեղեկատվություն իրենց իրական սեփականատերերի վերաբերյալ:
Պարտավորության հակիրճ նկարագրությունը	Կազմել և ընդունել կարգավորումներ, որոնք կպարտադրեն ստեղծել իրական սեփականատերերի ռեգիստր և հրապարակել նշված տեղեկատվությունը:

[3] 2015 թվականի մայիսի 20-ին ընդունված Եվրոպական միության Փողերի լվացման դեմ 4-րդ՝ 2015/849 թվակիր դիրեկտիվ Տե՛ս http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32015L0849

[4] https://www.opengovpartnership.org/sites/default/files/OGP_Fact-Sheet_Beneficial-Ownership_20180713.pdf

ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը	Հանրային վստահության բարելավում		
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Հանրային հաշվետվողականություն, տեղեկատվության հասանելիություն, տեխնոլոգիա		
Հավակնություն	Ակնկալվում է բարձրացնել ընկերությունների սեփականատերերի թափանցիկության և հաշվետվողականության մակարդակը՝ նվազեցնելով կոռուպցիան:		
Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ		Մեկնարկի օր	Ավարտի օր
Ընթացիկ գործողություններ			
Օրենսդրական փոփոխությունների նախագծում՝ ուղղված իրական սեփականատերերի ինստիտուտի ներդմանը		2019 հունվարի 1	2019 հունիսի 30
Օրինագծերի ընդունում		2019 հուլիսի 1	2019 դեկտեմբերի 31
Իրական սեփականատերերի ինստիտուտին ուղղված տեղեկատվական քարոզարշավ		2020 հունվարի 1	2020 հունիսի 30

3. ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ		
Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները		2019թ. հունվարի 1 – 2020թ. հունիսի 30
Լիազոր մարմինը		ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
Այլ շահագրգիռ մարմիններ	Այլ շահագրգիռ պետական մարմիններ	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա
Կարգավորման ենթակա խնդիրը		Թեև լոբբինգը կարող է բարելավել կառավարության որոշումների որակը, սակայն այն կարող է նաև բացասական ազդեցություն ունենալ, եթե լոբբինգի գործընթացը

	թափանցիկ չէ հանրության համար, իսկ չափանիշները՝ հստակ կերպով սահմանված: ՀՀ-ում ժամանակին մշակվել է «Լոբբիստական գործունեության մասին» օրենքի նախագիծը, որը չի ընդունվել, և ներկայումս լոբբիստական գործունեությունը կարգավորված չէ: Միջազգային հանրությունը կարգավորում է լոբբիստական գործունեությունը: Ավելին, մի շարք երկրներ իրեն ԲԿԳ գործողությունների ծրագրերում նախատեսում են լոբբիստական գործունեության կարգավորումների, ներառյալ՝ լոբբիստական ռեգիստրի ստեղծումը, օրինակ՝ Իսպանիա, Իռլանդիա և այլն: 2015 մայիսի դրությամբ, աշխարհում առնվազն 20 երկրներ ունեն որոշակի լոբբիստական կարգավորումներ ազգային մակարդակում, թեև կարգավորումների որակը բավականաչափ տարբեր է: Դրանց թվին են պատկանում Ավստրալիան, Ավստրիան, Բրազիլիան, Կանադան, Չիլին, Ֆրանսիան, Վրաստանը, Գերմանիան, Հունգարիան, Իռլանդիան, Իսրայելը, Լիտվան, Մակեդոնիան, Մոնտենեգրոն, Պերուն, Լեհաստանը, Սլովենիան, Թայվանը, Միացյալ Թագավորությունը և ԱՄՆ-ն: Այս հարցում միջազգային լավագույն փորձի դրսևորումն է Իռլանդիան: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը մշակել է «Լոբբինգի սկզբունքները և թափանցիկությունը» վերտառությամբ ուղենիշներ: Բացի այդ, որոշ հասարակական կառույցներ մշակել են Լոբբիստական կարգավորումների միջազգային ստանդարտներ:[5]
Հիմնական նպատակը	Կարգավորել լոբբիստական գործունեությունը ՀՀ-ում: Լոբբիստների ակտիվությունը կանոնակարգելիս կարևոր է ճիշտ բալանսավորում

[5] Transparency International, Access Info Europe, Sunlight Foundation and Open Knowledge, http://lobbyingtransparency.net/lobbyingtransparency.pdf

	իրականացնել, որպեսզի լոբբիստների ունեցած ազդեցությունը հանրային որոշումների վրա անհիմն կերպով սահմանափակումների չենթարկվի: Անհրաժեշտ է ստեղծել լոբբիստական գործունությունը կարգավորող օրենսդրական դաշտ, ինչպես նաև լոբբիստների պարտադիր ռեգիստր, որում պետք է գրանցվեն բոլոր անհատ լոբբիստները և լոբբիստական ընկերությունները լոբբիստական գործունեություն իրականացնելու նպատակով, և որոշակի պարբերությամբ հաշվետու կլինեն նշյալ գործունեության վերաբերյալ: Բացի այդ, հարկ է մշակել վարքագծի կանոններ թե լոբբիստների համար, թե՝ վերջիններիս ծառայություններից օգտվող պաշտոնյաների համար:
Պարտավորության հակիրճ նկարագրությունը	Նախատեսել լոբբիստական գործունության օրենսդրական կարգավորումներ և ստեղծել լոբբիստների ռեգիստր
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը	Հանրային վստահության բարելավում
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Հանրային հաշվետվողականություն, տեղեկատվության հասանելիություն, տեխնոլոգիա
Հավակնություն	Նվազեցնել քաղաքական կոռուպցիան և բարձրացնել թափանցիկությունը որոշումների կայացման գործընթացում:

Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ	Մեկնարկի օր	Ավարտի օր
«Լոբբիստական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի և լոբբիստների և վերջիններիս ծառայություններից օգտվող պաշտոնյաների համար վարքագծի կանոնների մշակում	2019 հունվարի 1	2019 հունիսի 30
Նշյալ նախագծերի և վարքագծերի կանոնների ընդունում	2019 հուլիսի 1	2019 դեկտեմբերի 31
Լոբբիստների ռեգիստրի ստեղծում	2020 հունվարի 1	2020 հունիսի 30

4. ԳՈՂԱՑՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

<table>
<tr><td colspan="2">Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները</td><td></td></tr>
<tr><td colspan="2">Լիազոր մարմինը</td><td>ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով</td></tr>
<tr><td rowspan="2">Այլ շահագրգիռ մարմիններ</td><td>Այլ շահագրգիռ պետական մարմիններ</td><td>ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատախազություն, ՀՀ հատուկ քննչական ծառայություն, ՀՀ քննչական կոմիտե, ՀՀ ոստիկանություն</td></tr>
<tr><td>Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված</td><td>Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա</td></tr>
<tr><td colspan="2">Կարգավորման ենթակա խնդիրը</td><td>Ակտիվների վերականգնումը իրավական գործընթաց է, որի միջոցով պետությունը, իշխանությունները և/կամ քաղաքացիները վերականգնում են այլ իրավասության տակ գտնվող այն ռեսուրսները և այլ ակտիվները, որոնք գողացվել են կոռուպցիայի միջոցով[6]: ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ Կոնվենցիան ակտիվների վերադարձը դիտում է որպես հիմնարար սկզբունք: ՀՀ-ում ներդրված չէ ակտիվների վերականգման միասնական համակարգ:
Մի շարք երկրներ իրենց ԲԿԳ գործողությունների ծրագրերում նախատեսում են գողացված ակտիվների վերականգնումը, օրինակ՝ Նիգերիան, Սիերա Լիոնեն, Գվատեմալան, Միացյալ Թագավորությունը և այլն: Ակտիվների վերականգնման՝ ինչպես քրեական, այնպես էլ քրեական օրենսդրության շրջանակներից դուրս ընթացակարգեր գործում են Շվեյցարիայում, Մեծ Բրիտանիայում, Իռլանդիայում, Իտալիայում, Գերմանիայում, Կոլումբիայում, Հերնսիում, Քուվեյթում, Ավստրալիայում, Ալբանիայում, Սլովենիայում, Իսրայելում, Կանադայում, ԱՄՆ-ում, Լիխտեյնշտեյնում, Ֆիլիպիններում, Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում</td></tr>
</table>

[6] https://transparency.am/glossary/term/asset_recovery

	և այլն: Առհասարակ, Միացյալ Թագավորությունը, ԱՄՆ-ն և Շվեյցարիան համարվում են միջազգային լավագույն փորձ նշյալ հարցում:[7] Կոռուպցիայի հետևանքով յուրացված ակտիվների վերականգման մակարդակի և վերականգնված ակտիվների հաշվետվողականության մակարդակի ավելացումը սահմանված է նաև «Արևելյան գործընկերություն՝ 2020 թվականին՝ 20 արդյունք» փաստաթղթում, որով պետություններին հանձնարարվում է նախատեսել ԱլԳ տարածաշրջանում հանցագործություններից ստացված եկամուտների արդյունավետ առգրավումը, բռնագրավումը և կառավարումը թույլատրող օրենսդրական շրջանակ, ինչպես նաև հիմնադրել ակտիվների վերականգնման և կառավարման գրասենյակներ՝ ԱլԳ տարածաշրջանում հանցավոր ճանապարհներով ձեռք բերված/ չհիմնավորված հարստության նույնականացման, սառեցման, կառավարման և բռնագրավման գրանցամատյանի վարմամբ: Հարկ է նաև հավելել, որ ակտիվների վերականգնման որոշ ասպեկտներ նախատեսված են նաև ՀՀ կառավարության ծրագրով:
Հիմնական նպատակը	Անհրաժեշտ է նախատեսել ակտիվների վերականգնման հստակ ծրագիր, մասնավորապես՝ • Հիմնադրել ակտիվների վերականգնման գրասենյակ և ստեղծել գողացված ակտիվների ռեեստր: • Զարգացնել իրավական փոխօգնության ինստիտուտը ՀՀ-ից դուրս գտնվող ակտիվների բացահայտման և բռնագրավման նպատակով:

[7] https://www.opengovpartnership.org/sites/default/files/Anticorruption_OGP_1.pdf, էջ՝ 10:

	• Ներդնել ակտիվների վերականգնման քրեական վարույթի շրջանակներից դուրս քաղաքացիական (օրենսդրության շրջանակներում ակտիվների վերականգնման in rem) ընթացակարգեր, ինչպիսիք գործում են Միացյալ Թագավորությունում, Շվեյցարիայում, Իռլանդիայում, Իտալիայում, Գերմանիայում, Սլովենիայում, Կանադայում, ԱՄՆ-ում, Լիխտեյնշտեյնում և այլ զարգացած երկրներում։ • Կատարել օրենսդրական բարեփոխումներ՝ ակտիվների ռեպատրիացիայի կառուցակարգերի ներդրման նպատակով։
Պարտավորության հակիրճ նկարագրությունը	Գողացված ակտիվների վերականգնման ծրագրի ներդրում, այդ թվում՝ գողացված ակտիվների ռեեստրի ստեղծում, իրավական փոխօգնության ինստիտուտի զարգացում, օրենսդրական փոփոխությունների կատարում՝ ուղղված գողացված ակտիվների վերականգնման քաղաքացիական ընթացակարգերի և ակտիվների ռեպատրիացիայի կառուցուկարգերի ներդրմանը։
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը	Հանրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարում, հանրային օրինավորության խթանում, հանրային վստահության բարելավում
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Հանրային մասնակցություն, հանրային հաշվետվողականություն, տեղեկատվության հասանելիություն, տեխնոլոգիա
Հավակնություն	Կոռուպցիայի հետևանքով գողացված ակտիվների վերականգնում

Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ	Մեկնարկի օր	Ավարտի օր
Գողացված ակտիվների վերականգնման գրասենյակի հիմնադրում և գողացված ակտիվների ռեեստրի ստեղծում	2019 հունվարի 1	2019 հունիսի 30

Ակտիվների ռեպատրիացիայի վերաբերյալ ՀՀ օրենքի նախագծի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և հարակից այլ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին նախագծերի մշակում՝ ուղղված ակտիվների վերականգնման քաղաքացիաիրավական ընթացակարգերի նախատեսմանը:	2019 հունվարի 1	2019 հունիսի 30
Իրավական փոխօգնության ինստիտուտի խնդիրների ուսումնասիրում և առաջարկությունների ներկայացում:	2019 հունվարի 1	2020 հունիսի 30
Նշյալ նախագծերի ընդունում	2019 հուլիսի 1	2019 դեկտեմբերի 31
Ակտիվների ռեպատրիացիա	2019 հունվարի 1	2020 հունիսի 30

5. ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ		
Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները		2019թ. հունվարի 1 – 2020թ. հունիսի 30
Լիազոր մարմինը		ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
Այլ շահագրգիռ մարմիններ	Այլ շահագրգիռ պետական մարմիններ	ՀՀ արդարադատության նախարարություն
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա
Կարգավորման ենթակա խնդիրը		Թեև վերջերս իրականացված՝ պաշտոնատար անձանց համար գույքի, եկամուտների և շահերի բախման հայտարարագրման պարտականության առնչվող մի շարք բարեփոխումներին, այնուամենայնիվ նշյալ համակարգում առկա են մի շարք բացեր, որոնք հնարավորություն են ընձեռնում պաշտոնատար

	անձանց՝ շրջանցել նշյալ նորմերը և չներկայացնել իրենց պատկանող ունեցվածքի իրական պատկերը։ Գույքի, եկամուտների և շահերի բախման հայտարարագրման համակարգի շարունակական բարելավումը նախատեսված է Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով, Եվրոպական Միության և Հայաստանի գործընկերության առաջնահերթություններով, «Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման բարեփոխումներին. Ավելի արդյունավետ և պատշաճ հանրային կառավարման միջոցով լավագույն ծառայությունների մատուցում» ֆինանսական համաձայնագրով, ինչպես նաև՝ ՀՀ կառավարության ծրագրով։ Ավելին, այն ներառված է որպես հանձնառություն մի շարք երկրների ԲԿԳ գործողությունների ծրագրերում։
Հիմնական նպատակը	• Վերանայել հայտարարագրման մասին օրենսդրությունը, մասնավորապես՝ o ընդլայնել հայտարարատու պաշտոնատար անձանց ցանկը, ընդլայնել հայտարարատու պաշտոնատար անձանց հետ փոխկապակցված՝ հայտարարագրման պարտականություն ունեցող անձանց ցանկը, վերանայել հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար նախատեսված պատժամիջոցները, վերանայել հայտարարագրման առարկան, վերացնել հայտարարագրման ոչ ենթակա շարժական և անշարժ գույքի վերաբերյալ չափանիշները, այդ թվում նաև՝ ֆինանսական շեմերը, o վերանայել հրապարակայնության ապահովման պահանջները,

	o վերանայել հայտարարագրերի վերլուծությամբ զբաղվող մարմնի լիազորությունները, այդ թվում՝ տրամադրելով ցանկացած քաղաքացուց *ad hoc* հայտարարագիր պահանջելու իրավասություն, • մշակել և ընդունել հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանություն, որը ներառում է նաև հայտարարագրերի ստուգման և աուդիտի անցկացման համակարգ՝ հիմնված անկանոնությունները և ռիսկայնությունները վեր հանող կարմիր դրոշակների վրա՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան, իրավասու մարմնի կողմից վերլուծել և ստուգել նշյալ մեթոդաբանական վերլուծության վրա հիմնված բոլոր հայտարարագրերը, ռիսկերի ստուգման արդյունքում հայտնաբերված բոլոր «կարմիր դրոշակակիր» նյութերն ուղղորդել գլխավոր դատախազություն: • Ներդնել շահերի և ակտիվների էլեկտրոնային և հեշտ որոնվող հանրային ռեգիստր:
Պարտավորության հակիրճ նկարագրությունը	Գույքի, եկամուտների և շահերի բախման հայտարարագրման համակարգի վերանայում, շահերի և ակտիվների էլեկտրոնային և հեշտ որոնվող հանրային ռեգիստրի ներդրում, հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանության մշակում և ընդունում:
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը	Հանրային ծառայողների օրինավոր դասի ձևավորում, հանրային վստահության բարելավում
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Հանրային հաշվետվողականություն, տեղեկատվության հասանելիություն, տեխնոլոգիա
Հավակնություն	Հանրային ծառայողների օրինավոր դասի ձևավորում

Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ	Մեկնարկի օր	Ավարտի օր

Հայտարարագրման համակարգի խնդիրները վերհանելու նպատակով կլոր սեղանների կազմակերպում բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, այդ թվում՝ հետաքննող լրագրողներ, և «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքներում օրենսդրական փոփոխությունների նախագծերի մշակում և հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանության մշակում	2019 հունվարի 1	2019 հունիսի 30
Նշյալ նախագծերի և մեթոդաբանության ընդունում	2019 հուլիսի 1	2019 դեկտեմբերի 31
Շահերի և ակտիվների էլեկտրոնային և հեշտ որոնվող հանրային ռեգիստրի ներդրում	2019 հունվարի 1	2020 հունիսի 30

6. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ (ANTI-CORRUPTION COMPLIANCE PROGRAM) ՆԵՐԴՐՈՒՄ		
Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները		2019թ. հունվարի 1 – 2020թ. հունիսի 30
Լիազոր մարմինը		ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
Այլ շահագրգիռ մարմիններ	Այլ շահագրգիռ պետական մարմիններ	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա
Կարգավորման ենթակա խնդիրը		Մասնավոր սեկտորում կոռուպցիան չի կարող վերանալ առանց մասնավոր սեկտորի մասնակցության: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի նոր նախագծով սահմանվում է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը: Նախագծի 129-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառվում է, եթե նրա կողմից ձեռնարկվել են

	անհրաժեշտ և բավարար բոլոր միջոցները սույն օրենսգրքի հոդված 128-ի առաջին մասով նախատեսված անձանց կողմից հանցանքի կատարումը կանխելու նպատակով, սակայն հանցագործությունը կանխելու իրական հնարավորությունը բացակայել է: Այդուամենայնիվ, նախատեսված չէ, թե որոնք են այդ միջոցները: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ խոսքը հենց հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերին է վերաբերում: Կորպորատիվ հաշվետվողականության բարելավումը, ի դեմս՝ նշյալ ծրագրերի ներդրմամբ, ևս տեղ է գտնում ԲԿԳ գործողությունների ծրագրերում, օրինակ՝ Իտալիա, Ֆիլիպիններ: Մի շարք երկրներում նման ծրագրերի ներդրումը նաև հնարավորություն է տալիս իրավաբանական անձին կամ առհասարակ խուսափել քրեական պատասխանատվությունից, օրինակ՝ Նիդերլանդներ, Իսպանիա, Ավստրալիա, Շվեյցարիա, կամ՝ հանդես է գալիս որպես մեղմացուցիչ հանգամանք, օրինակ՝ Լատվիա, Մոնտենեգրո, Սերբիա և Ուկրաինա: Նշյալ ծրագրերի ներդրումը կարող է գրավիչ լինել մասնավոր ընկերությունների համար նաև այն պատճառով, որ այն կարող է հանդիսանալ «մաքուր բիզնեսի» վարկանիշային համակարգի չափանիշ:
Հիմնական նպատակը	ՀՀ-ում ներդնել կորպորատիվ համապատասխանության ծրագիր: Վերջինիս շրջանակներում նախատեսել, որ իրավաբանական անձի աշխատակազմը ենթարկվում է համապատասխան հակակոռուպցիոն ուսուցումների, մշակել շահերի բախման, նվերների ընդունման և այլ քաղաքականություններ, և ստեղծվել հատուկ ստորաբաժանում կամ կոնկրետ հաստիք, որը հաճախ անվանվում է

	Integrity Officer, որը զբաղվում է աշխատողների կողմից վերոնշյալ քաղաքականությունների պահպանման և բարեխիղճ վարքագիծ ցուցաբերելու նկատմամբ հսկողությամբ: Նախնական փուլում անհրաժեշտ է կիրառել որպես օրենսդրական պարտադիր պահանջ միայն խոշոր առևտրային ընկերությունների նկատմամբ:
Պարտավորության հակիրճ նկարագրությունը	ՀՀ-ում ներդնել հակակոռուպցիոն համապատասխանության ծրագիր՝ ուղղված ընդունելի բարեխղճության ստանդարտների տարածմանը:
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը	Հանրային օրինավորության խթանում
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Հանրային հաշվետվողականություն
Հավակնություն	ՀՀ-ում մասնավոր կոռուպցիայի մակարդակի նվազում և կորպորատիվ հաշվետվողականության բարելավում:

Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ	Մեկնարկի օր	Ավարտի օր
Կորպորատիվ համապատասխանության ծրագրի ներդրման ուղղված օրենսդրական փոփոխությունների նախագծերի մշակում	2019 հունվարի 1	2019 հունիսի 30
Նշյալ նախագծերի ընդունում	2019 հուլիսի 1	2019 դեկտեմբերի 31
Կորպորատիվ համապատասխանության ծրագրի ներդրման ուղղված տեղեկատվական քարոզարշավ	2020 հունվարի 1	2020 հունիսի 30

7. ԱՆՏԱՌՆԵՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԹՎԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ	
Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները	2019թ. հունվարի 1 – 2020թ. դեկտեմբերի 31

Լիազոր մարմինը		ՀՀ բնապահպանության նախարարություն
Այլ շահագրգիռ մարմիններ	Այլ շահագրգիռ պետական մարմիններ	ՀՀ արդարադատության նախարարություն
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա
Կարգավորման ենթակա խնդիրը		Անտառային ռեսուրսները ցանկացած երկրի ազգային բնական հարստության կարևորագույն բաղադրիչներից մեկն են կազմում: Անտառային ռեսուրսների կայուն օգտագործումը ենթադրում է դրանց քարտեզագրում, որը նաև կզսպի սույն ոլորտում տեղի ունեցող ապօրինի անտառահատումների և այլնի հետ կապված կոռուպցիոն ռիսկերը: Անտառների թվայնացումը ևս տեղ է գտնում ԲԿԳ գործողությունների ծրագրերում, օրինակ՝ Ալբանիա, Նորվեգիա և այլն: Մեր հարևան Վրաստանում արդեն ստեղծվել է նման առցանց քարտեզ՝ atlas.mepa.gov.ge: Անտառային ռեսուրսների վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի, այն է՝ թվայնացված քարտեզի ստեղծումը և ներդրումը տեղեկատվության հասանելիության տեսանկյունից կարևոր խթան կհանդիսանա ոլորտի թափանցիկության և հանրային ծառայությունների մատուցման բարելավման համար:
Հիմնական նպատակը		ՀՀ-ում ստեղծել անտառների թվայնացված յուրօրինակ քարտեզ, որը կտրամադրի տարաբնույթ վերլուծություններ ՀՀ անտառների վերաբերյալ, ներառյալ՝ ծառերով ծածկույթի ընդհանուր մակարդակի ավելացման կամ նվազեցման, վտանգի ռիսկի, չվնասված անտառային լանդշաֆտի, անտառային հրդեհների և այլնի վերաբերյալ: Այս կայքի միջոցով հնարավոր կլինի

	• դուրս բերել տվյալներ ծառերով ծածկույթի ընդհանուր մակարդակի ավելացման կամ նվազեցման վերաբերյալ ըստ տարիների և ըստ տարածքների, • հետևել և մոնիթորինգի ենթարկել անտառային հրդեհները՝ հիմնված VIIRS և MODIS արբանյակային տվյալների վրա, • ներբեռնել և օգտագործել քարտեզում օգտագործվող տվյալների բազաները:
Պարտավորության հակիրճ նկարագրությունը	ՀՀ-ում ստեղծել անտառների թվայնացված քարտեզ:
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը	Հանրային ունեցվածքի չարաշահման ռիսկի նվազեցում, հանրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարում
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Հանրային հաշվետվողականություն, տեխնոլոգիա, հանրային մասնակցություն, տեղեկատվության հասանելիություն
Հավակնություն	Ակնկալվում է անտառային ռեսուրսների վերաբերյալ հաշվետվողականության և թափանցիկության մակարդակների բարձրացում, որի արդյունքում տվյալ ոլորտում կոռուպցիոն ռիսկերի զսպում:

Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ	Մեկնարկի օր	Ավարտի օր
Թվայնացված անտառային քարտեզ ստեղծելու վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների նախագծի կազմում (հավանաբար՝ «ՀՀ անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի)՝ միջազգային փորձի հիման վրա:	2018 հոկտեմբերի 1	2019 ապրիլի 30
Նշյալ նախագծի ընդունում:	2019 մայիսի 1	2019 հոկտեմբեր 30
Կայքի տեխնիկական բնութագրի կազմում:	2019 նոյեմբերի 1	2020 ապրիլի 30